Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդում

30 ,, 08 ,, 2021 թ.

(արձանագրություն N 1)

ՀԱԱՀ գիտական խորհրդի նախագահ

Վ.Է. Ռուռուտյան

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմեր

N	Աշխատանքի ձևը	Ժամանակի նորմերը	Ծանոթություն
1.	Դասախոսություն	հոսք	Հոսքը՝ մինչև 60 ուսանող: Առարկայական ծրագրերի համապատասխանության դեպքում հոսքի մեջ թույլատրել ընդգրկել տարբեր մասնագիտությունների ուսանողների:
2.	Գործնական պարապմունք	խումբ	Խումբը՝ 25-30 ուսանող: Անասնաբուժություն և Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն կրթական ծրագրերի դեպքում՝ 16-20 ուսանող: («Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դեպքում՝ աշխատանքային անվտանգության պայմաններն ապահովելու նպատակով՝ 15 ուսանող յուրաքանչյուր խմբում)
3.	Լաբորատոր պարապմունք	ենթախումբ	Ենթախումբը՝ 12-17 ուսանող:

			Անասնաբուժություն և Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն կրթական ծրագրերի դեպքում՝ 8-10 ուսանող:
4.	Ստուգարքի ընդունում	*Տարբերակված ստուգարք* 1 ժամ 4 ուսանողին կիսամյակի ընթացքում	
		Ստուգարք 1 ժամ 4 ուսանողին կիսամյակի ընթացքում	
5.	Միջանկյալ քննությունների ընդունում	0.25 ժամ 1 ուսանողին 1 ընթացիկ քննության համար	Բազմագործոնային գնահատման համակարգում պարտադիր բաղադրիչ է: Էլեկտրոնային թեստային եղանակով քննությունների հանձման դեպքում միջանկյալ և վերջնական քննությունների ընդունման համար դասախոսներին ժամեր չեն հատկացվում:
6.	Վերջնական քննությունների ընդունում	0.25 ժամ 1 ուսանողին կիսամյակի ընթացքում	
7.	Խորհրդատվություն	*Առկա ուսուցման համակարգ* Առարկայի դասախոսության ժամաքանակի 3%+2 ժամ յուրաքանչյուր ենթախմբի համար	Եթե դասընթացին հատկացված են միայն լաբորատոր ժամեր, դասախոսության ժամաքանակի փոխարեն հաշվարկել լաբորատոր ժամաքանակը:
		Հեռակա ուսուցման համակարգ 0.5 ժամ 1 ուսանողին քննական առարկայի համար 0.33 ժամ 1 ուսանողին ստուգարքային առարկայի համար	
8.	Ամփոփիչ քննություն բակալավրիատում	*հանձնաժողովի նախագահ, անդամներ, քարտուղար* 1 ժամ 2 ուսանողին	
9.	Ավարտական աշխատանքի (նախագծի) պաշտպանություն	*հանձնաժողովի նախագահ* 1 ժամ 1 ուսանողին	Հանձնաժողովի կազմը՝ ԲՈՒՀ-մինչև 8 անդամ Քոլեջ-մինչև 6 անդամ
		հանձնաժողովի անդամներ, քարտուղար 1 ժամ 2 ուսանողին	

10.	Մագիստրոսական թեզի պաշտպանություն	*հանձնաժողովի նախագահ* 1 ժամ 1 ուսանողին	
		հանձնաժողովի անդամներ, քարտուղար 1 ժամ 2 ուսանողին	
11.	Գրախոսություն	*ԲՈՒՀ* 6 ժամ 1 դիպլոմային աշխատանքի (նախագծի) գրախոսության համար 6 ժամ 1 մագիստրոսական թեզի գրախոսության համար	
		Քոլեջ 4 ժամ 1 դիպլոմային աշխատանքի (նախագծի) գրախոսման համար	
12.	Ինքնուրույն աշխատանք	1 ժամ 4 ուսանողին կիսամյակի ընթացքում	Ինքնուրույն աշխատանքին ժամ հատկացնել առկա և հեռակա ուսուցման համակարգերի 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի ժամաքանակը հաշվարկելիս:
13.	Կուրսային աշխատանքի (նախագծի) ղեկավարում	*ԲՈՒՀ* 2.5 ժամ 1 ուսանողին	
		Քոլեջ 1.5 ժամ 1 ուսանողին	
14.	Դիպլոմային աշխատանքի (նախագծի) ղեկավարում	*ԲՈՒՀ* 30 ժամ 1 դիպլոմային աշխատանքի (նախագծի) ղեկավարման համար	
		Քոլեջ 15 ժամ 1 դիպլոմային աշխատանքի (նախագծի) ղեկավարման համար	
15.	Մագիստրոսական թեզի ղեկավարում	50 ժամ 1 մագիստրոսական թեզի ղեկավարման համար	
16.	Ասպիրանտի կամ հայցորդի ղեկավարում	50 ժամ տարվա ընթացքում 1 ասպիրանտի կամ հայցորդի համար	Պրոֆեսորը կարող է ղեկավարել տարբեր տարիների մինչև 5 ասպիրանտ և հայցորդ, դոցենտը՝ 3 ասպիրանտ և հայցորդ:

17.	Արտադրական և նախադիպլոմային պրակտիկայի ղեկավարում /ներառյալ հաշվետվության ընդունում և պաշտպանություն/	1.*Արտադրական պրակտիկա* 3 ժամ յուրաքանչյուր խմբին 1 աշխատանքային օրվա համար 2. *Նախադիպլոմային պրակտիկա* 3 ժամ յուրաքանչյուր կուրսին 1 աշխատանքային օրվա համար	Առկա ուսուցման համակարգի համար սահմանել 6-օրյա շաբաթ, հեռակա ուսուցման համակարգի համար՝ 5-օրյա:
18.	Կամընտրային առարկաներ	խմբում սովորողների նվազագույն թիվը 5	Ագրարարային ճարտարագիտության և Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետներում թույլատրել նաև մինչև 5 ուսանողներից կազմված խմբի ձևավորում:
19.			

1. Համալսարանում սահմանել դասախոսական անձնակազմի հետևյալ տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս (ովքեր նախկինում զբաղեցրել են այդ տարակարգը), դասախոս և ասիստենտ:

2. Դասախոսական մեկ հաստիքի ուսումնական միջին ծանրաբեռնվածությունը Համալսարանում սահմանել 850 ժամ: Կախված զբաղեցրած պաշտոնից՝ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծարաբեռնվածությունը տարբերակել հետևյալ եղանակով՝

պրոֆեսորի համար	-710 ժամ
դոցենտի համար	-790 ժամ
ավագ դասախոսի համար	-800 ժամ
դասախոսի համար	-850 ժամ
ասիստենտի համար	-900 ժամ

3. Նվազագույն դասախոսական ժամը պետք է կազմի ոչ պակաս, քան նվազագույն լսարանային ծանրաբեռնվածության 35 տոկոսը:

4. Դասախոսների միջև ամբիոնային բեռնվածության բաշխումը կատարում է ամբիոնի վարիչը՝ դեկանի հետ համաձայնեցված:

5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան նորմատիվային աշխատաժամանակը սահմանել 1620 ժամ (45 շաբաթ, շաբաթական 36 ժամ): Դասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունը մեկ հաստիքի համար՝ ներառյալ նաև լրացուցիչ հաստիքային և/կամ ժամավճարային ժամաքանակը սահմանել ոչ ավելի, քան 1080 ժամ: Ամբիոնի ժամաքանակից կախված՝ դասախոսին կարելի է հատկացնել նաև 1.25 դրույք, եթե ընդհանուր ժամաքանակը չի գերազանցում 1080-ը: 1620 ժամ աշխատանքային քանակի մնացած ժամերը տրամադրել ուսումնա-մեթոդական, գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական, կազմակերպամեթոդական և ուսումնական ու գիտական այլ գործընթացների հետ առնչվող աշխատանքներ կատարելու համար:

6. Ներքին և արտաքին համատեղությամբ դասավանդելու համար հրավիրված մասնագետներին ձևակերպել մինչև 0.5 դրույքով կամ ժամավճարային հիմունքներով:

7. Ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների ուսումնական տարվա ընթացքում կատարած ուսումնական աշխատանքների և վարձատրության հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով փաստացի ծախսած ակադեմիական ժամերը:

8. Ժամային նորմերի և պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքների դասախոսների ուսումնական աշխատանքների հաշվարկը կատարել ակադեմիական ժամերով: Ակադեմիական ժամը սահմանել զույգ ժամերի վարման միջոցով (մեկ դասաժամը երկու ակադեմիական ժամ)՝ առաջին ժամ՝ 60 րոպե, 2-րդ ժամից սկսած՝ 50 րոպե:

9. Ամբիոնի վարիչի ծանրաբեռնվածությունը սահմանել 1.0 հաստիք (ներառած 0.5 դրույք ուսումնական ծանրաբեռնվածություն):

10. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի 2019 թվականի հուլիսի 4-ի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման չափորոշիչների մասին որոշումը: